

ԽՈՍՔԻ ՏԵՄՊԸ

Ա. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ռ. Մ. ԲՈՒՄԱԽՅԱՆ, Հ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

Խոսքը լեզվի դրսևորումն է, նրա կոնկրետ իրացումը: Այն գծային կարգի երևույթ է, այսինքն՝ նրանում կա խոսքային հնչյունների որոշ հաջորդակա-
նություն: Հնչույթները խոսքի լեզվաբանական հատուկավորման նվազագույն
միավորներն են: Խոսքի հնչյունները, որոնք հնչույթների կոնկրետ դրսևորում-
ներն են, չեն կարող ծածկել մեկը մյուսին կամ մտնել միմյանց մեջ, նրանք
կարող են միայն հաջորդել միմյանց ժամանակի առանցքում: Հնչյուններից
կազմված շղթան ունի արտաբերման որոշակի արագություն, որը պայմանա-
վորված է ժամանակի միավորում հանդես եկող հնչյունների քանակով: Հե-
տևաբար, խոսքի արագությունը (տեմպը) այն ժամանակահատվածն է, որը
ծախսվում է լեզվական միավորների արտաբերման ժամանակ: Խհարկե, նույն
լեզվով խոսող հանրության ոչ բոլոր ներկայացուցիչներն են միևնույն արա-
գությամբ արտաբերում խոսքային միավորները, սակայն ամեն մի լեզվի հա-
մար կարելի է գտնել մի միջին ցուցանիշ, որը կարող է գաղափար տալ այս
կամ այն լեզվի խոսքային տեմպի մասին: Լեզվի տեմպի ձևավորման վրա մեծ
ազդեցություն ունեն այդ լեզվով խոսող ժողովրդի առանձնահատկություննե-
րը, որոնց թվում ինչպես բուն լեզվական, այնպես էլ արտալեզվական բազմա-
թիվ գործոններ: Խոսքի տեմպը որևէ լեզվի համար հաստատուն ու անփոփոխ
երևույթ չէ, այլ կարող է փոփոխվել ժամանակի ընթացքում: Փոփոխական է
նաև լեզվական անհատի խոսքի տեմպը՝ կախված խոսակցության տեղից, մի-
ջավայրից, նպատակներից և այլն:

Տեմպի փոփոխությունը խոսքին հաղորդում է իմաստային և հուզական
նոր երանգավորումներ: Եթե սովորական խոսակցությունը համարենք անհա-
տի խոսքի միջին տեմպ, ապա վերջինիս արագացումը կարող է արտահայտել
անհատի հոգեկան խռովքը կամ հուզական վիճակը: Ուստի, տեմպի արագա-
ցումը ինքնանպատակ չէ, այլ սերտորեն կապված է հաղորդվող խոսքի բո-
վանդակության կամ խոսող անհատի հոգեվիճակի փոփոխման հետ:

Դանդաղ տեմպը ավելի բնորոշ է հանդիսավոր, պաշտոնական արարողու-
թյունների ժամանակ արտասանվող խոսքին: Երբեմն հաղորդման ժամանակ
այս կամ այն մտքի կարևորությունը ընդգծելու, շեշտելու համար խոսքի այդ
հատվածի տեմպը փոփոխվում է. սովորաբար այն լինում է ավելի դանդաղ,
քան շղթայի մյուս հատվածները, ընդ որում ավելանում են բառերի և շարույթ-
ների միջև ընկած դադարների տևողությունները: Հակառակ պատկերն է նկատ-
վում տեմպի արագացման ժամանակ: Այս դեպքում պակասում են հնչյունա-
կան շղթայի իմաստակիր հատուկիների միջև գտնվող դադարների ժամանա-
կահատվածները և հնչյունների տևողության ժամանակը, որի: հետևանքով
նրանում հանդես եկող բառերը դառնում են հնչյունական փոփոխությունների
ենթարկվելու ունակ:

Հայերենի խոսքի տեմպը տակավին չի ուսումնասիրվել: Ներկա հոդվածը այս ուղղությամբ կատարվող առաջին փորձն է: Քանի որ տեմպ հասկացությունը ինքնին հարաբերական է, ապա հայերենի խոսքի տեմպի ուսումնասիրության համար համեմատության եզր է ծառայել ռուսերենը: Վիճակագրական հաշվումները կատարվել են ռադիոյով ու հեռուստատեսությամբ հաղորդված բաղմամբի տեքստերի հիման վրա: Ընտրվել են թե՛ թեմատիկայով և թե՛ բովանդակությամբ միմյանց մոտ տեքստեր: Բոլոր տեքստերը, այդ թվում նաև հեռուստատեսությամբ հայերեն և ռուսերեն լեզուներով հաղորդվող 30 րոպե տևողությամբ «Ժամանակ» ծրագրերը, նախապես գրանցվել են մագնիտոֆոնային ժապավենների վրա, ապա վերծանվել ու տառադարձվել են: Հաշվվել են նրանցում եղած բոլոր հնչյունները, վանկերը, բառերն ու հնչաբառերը: Ուսումնասիրության ենթակա ողջ նյութը պայմանականորեն բաժանվել է 3 արտասանական ոճերի. ա) հաղորդավարի խոսք, բ) նախապես պատրաստված, բայց ոչ հաղորդավարի խոսք, գ) հանպատաստից խոսք:

Առաջին արտասանական ոճի մեջ մտնում են միայն հաղորդավարների կարդացած տեքստերը: Երկրորդի մեջ՝ նախապես պատրաստված, բայց ոչ հաղորդավարների խոսքը: Երրորդում առանձնացվել է այն մարդկանց արտասանությունները, որոնք առանց նախապատրաստվելու պատասխանում են տրվող հարցերին:

Խոսքի տեմպի հետ անմիջականորեն կապվում են հնչյունական մի շարք երևույթներ: Խոսքի արագացման հետևանքով հնչյունական շղթայում կորչում են առանձին հնչյունների տարբերակիչ հատկանիշները, տեղի են ունենում հնչյունափոխություններ, բառերի կազմից դուրս են ընկնում առանձին վանկեր, ստեղծվում են նոր անսովոր հնչաբառեր, որոնք հատուկ չեն դանդաղ տեմպով արտասանությանը և այլն: Հայերենի համար հատկապես կարելի է նշել ը ձայնավորի արտասանության տարբեր դրսևորումները՝ կախված խոսքի արագությունից: Ակնհայտ է, որ դանդաղ տեմպի դեպքում ը-ի արտասանությունը ավելի որոշակի է ու հստակ: Այն նույնիսկ գործածվում է այնպիսի դեպքերում, երբ ժամանակակից հայերենի արտասանության նորմավորման միտումը ը չարտասանելն է: Օրինակ՝ «Ծս ստիպված եմ հայտարարելու» շարույթի մեջ «ես» և «ստիպված» բառերի միջև, սովորաբար, միջին և արագ տեմպով ընթացող խոսքում ը ձայնավորը չի արտասանվում: Իսկ դանդաղ տեմպով խոսքի մեջ, հատկապես ավադ սերնդի ներկայացուցիչների մոտ, հաճախ այն արտասանվում է:

Խոսքի տեմպը ազդում է նաև արտասանվածքի հատույթավորման վրա: Դանդաղ տեմպի ժամանակ հայերենում սովորաբար շեշտվում են բոլոր իմաստակիր բառերը, մինչդեռ արագ խոսքի դեպքում հաճախ նրանք կորցնելով իրենց շեշտը, մի ավելի մեծ շարույթի կազմում հանդես են գալիս որպես նախահար կամ վերջահար բառեր: Ուսումնասիրության համար ընտրված նյութը, որի վրա կատարվել են վիճակագրական հաշվումները, ունի մոտ 3,5 ժամվա տևողություն: Տեքստերի համեմատության միավոր վերցվել է խոսքի ջղթայի հոսքը 1 վայրկյանում, ընդ որում վիճակագրական հաշվումներ կատարելու հարմարության նկատառումներով չեն հաշվվել ֆրազների միջև եղած դադարները:

Հայ և ռուս հաղորդավարների խոսքի արագության համեմատությունը ցույց է տալիս, որ ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդավարների մոտ

մշակվել է խոսքի արտաբերության որոշակի արագություն, որն անկասկած պայմանավորված է հաղորդման պահանջներով ու նպատակներով: Այս նպատակադրումը կարող է հանգեցնել տեմպի շատ մեծ արագացման, եթե հակառակ ազդեցություն չունենա հաղորդավարների խոսքի տպավորիչ, մատչելի, կանոնավոր, միլիոնավոր ունկնդիրներին հասկանալի լինելու միտումը: Այս երկու հակադիր միտումները հանգեցնում են խոսքի առավելագույն հնարավորությունների օդաազդածմանը: Բնականաբար, երբ հաղորդումներ են տրվում փոքրահասակ երեխաների կամ օտարերկրյա ունկնդիրների համար, համապատասխանաբար նվազում է խոսքի արագությունը:

Հաշվումները ցույց են տալիս, որ հայ և ռուս հաղորդավարների խոսքի արագությունները գտնվում են գրեթե նույն սահմաններում: Եթե հայ հաղորդավարը 1 վայրկյանում արտաբերում է միջին հաշվով 13,65 հնչյուն, 5,75 վանկ և 1,89 բառ, ապա ռուս հաղորդավարը նույն ժամանակահատվածում արտաբերում է 13,32 հնչյուն, 5,51 վանկ և 2 բառ: Ինչպես երևում է ստացված արդյունքներից, հայ հաղորդավարների խոսքը մի փոքր արագ է ռուս հաղորդավարների խոսքից, թեև բառերի քանակի ցուցանիշով ռուսերեն խոսքում ավելի շատ միավորներ են պարունակվում: Սա ցույց է տալիս, որ հայերեն խոսքում անհամեմատ ավելի շատ է մեծաքանակ հնչյուններ պարունակող բառերի թիվը, որը մեկ անգամ ևս ապացուցում է հայերենի բառակազմական լայն հնարավորությունները: Նույն տեքստերում հնչաբառերի համեմատությունը ցույց տվեց, որ հայ հաղորդավարների մոտ այն կազմում է 1 վայրկյանում 1,77 միավոր, մինչդեռ ռուսերենում 1,71 է: Հնչաբառերի համեմատությունը ևս վկայում է հայ հաղորդավարների խոսքի արագությունը ռուս հաղորդավարների արտասանության համեմատությամբ: Նման եզրահանգմանը հիմք է ծառայել «Ժամանակ» ծրագրերի ու պաշտոնական հաղորդագրությունների ժամանակ խոսքերի համեմատությունը: Սա, իհարկե, չի նշանակում, որ բոլոր տեքստերի ընթերցանության ժամանակ հայ հաղորդավարների խոսքի արագությունը մեծ է ռուս հաղորդավարների խոսքից:

Եթե հաղորդավարների արտասանության տեմպերի (խոսքը վերաբերվում է միայն արտասանության վերը նշված դեպքերին) համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք գտնվում են գրեթե նույն սահմաններում, ապա նախապես պատրաստված և նյութին ծանոթ մարդկանց խոսքը, որը մեր դասակարգմամբ արտասանության երկրորդ ոճն է, համեմատաբար դանդաղ տեմպ ունի, ինչպես ռուս, այնպես էլ հայ մարդկանց արտաբերության ժամանակ: Սակայն, եթե ռուսերեն խոսքի արագության նվազումը այս ոճում հաղորդավարների խոսքի համեմատությամբ փոքր տոկոս է կազմում, ապա հայերենում նույն համեմատությունը տալիս է ակնհայտորեն ավելի մեծ տարբերություններ: Ժամանակի միավորի ընթացքում այս ոճում ռուսերենում հնչվում է 12,87 հնչյուն, 5,41 վանկ և 2,05 բառ: Այսինքն՝ եթե ռուս հաղորդավարների խոսքում մեկ հնչյունի միջին տևողությունը հավասար էր մոտ 75 մմ/վրկ-ի, ապա նախապես պատրաստված, բայց ոչ-հաղորդավարների խոսքում կազմում է միջին հաշվով 78 մմ/վրկ: Երկրորդ ոճի նույնանման տեքստերում ռուսերենում վանկն ունի 185 մմ/վրկ, իսկ բառը՝ 488 մմ/վրկ տևողություն:

Համապատասխան պայմաններում արտաբերվող հայերեն խոսքը ավելի դանդաղ է ռուսերենից: Հայերենում 1 վայրկյանի համար ստացվել են հետևյալ արդյունքները՝ 10 հնչյուն, 4,16 վանկ և 1,59 բառ: Այլ խոսքով, հայերենի

այս ոճում հնչյունի տևողությունը հավասար է 100 մմ/վրկ-ի, վանկինը՝ 240 մմ/վրկ-ի, իսկ բառինը՝ 629 մմ/վրկ-ի:

Մեր դասակարգման երրորդ ոճը հանպատրաստից խոսքն է: Ստացված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հանպատրաստից խոսքը հաղորդվարների և նախապես պատրաստված, բայց ոչ-հաղորդվարների խոսքի արագությունից ավելի դանդաղ է:

Խերևս այստեղ պետք է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է հարցին տրվող անմիջական պատասխանին: Պատասխանի արագությունը սովորաբար տարբերվում է խոսողի միջին տեմպից, քանի որ պատասխանողը մշտածում է հարցի մասին, այսինքն փորձում է հասկանալ նրա էությունը, երբեմն էլ շփոթվում հարցի անսպասելիությունից և ստացվում է խոսքի արագության նվազում: Այստեղ արդեն մեծ դեր են խաղում այս ոճին բնորոշ դարձների տևողությունների երկարումը, որը առավել նկատելի է շարունակների միջև: Իհարկե, ոչ բոլոր պատասխաններում կարելի է տեսնել արտասանության տեմպի դանդաղացում: Այն դեպքերում, երբ որոշակի է տրվող պատասխանը կամ պատասխանողը մեկ անգամ ևս հավաստում է իր ասածի ճշտությունը, նրա խոսքի արագությունը ավելի մեծ է:

Հանպատրաստից խոսքի հայերեն և ռուսերեն տեքստերի համեմատությունները ցույց տվեցին, որ այս արտասանական ոճում ևս ռուսերենի տեմպը ավելի արագ է հայերենից: Հայերենում ունենք հետևյալ արդյունքները՝ 1 վայրկյանում արտաբերվում է 9,26 հնչյուն, 3,79 վանկ, 1,67 բառ: Այսինքն՝ այս տեքստերում, ըստ միջին ցուցանիշների հնչյունը ունի 108 մմ/վրկ, վանկը՝ 264 մմ/վրկ, իսկ բառը 599 մմ/վրկ տևողություն: Ռուսերենում համապատասխան պայմաններում ունենք հետևյալ արդյունքները՝ մեկ վայրկյանում արտաբերվում է 11,5 հնչյուն, 4,87 վանկ և 2,02 բառ կամ հնչյունը ունի 87 մմ/վրկ, վանկը՝ 205 մմ/վրկ, իսկ բառը 495 մմ/վրկ տևողություն:

Հայերեն և ռուսերեն տեքստերի համեմատության աղյուսակ

Խոսքի ոճ	Հնչյունի քանակը 1 վրկ-ում		Վանկի քանակը 1 վրկ-ում		Բառի քանակը 1 վրկ-ում		Հնչաբառը 1 վրկ-ում	
	հայ.	ռուս.	հայ.	ռուս.	հայ.	ռուս.	հայ.	ռուս.
1 ոճ	13,65	13,32	5,75	5,51	1,89	2,00	1,77	1,71
2 ոճ	10,00	12,87	4,16	5,41	1,59	2,05	1,47	1,75
3 ոճ	9,26	11,50	3,79	4,87	1,67	2,02	1,54	1,62
Միջինը	10,95	12,56	4,52	5,26	1,72	2,02	1,59	1,69

Հնչյունի, վանկի և բառի տևողությունների աղյուսակ՝ ըստ մմ/վրկ.

Խոսքի ոճ	Հնչյուն		Վանկ		Բառ	
	հայ.	ռուս.	հայ.	ռուս.	հայ.	ռուս.
1 ոճ	73	75	174	181	529	500
2 ոճ	100	78	240	185	599	488
3 ոճ	108	87	264	205	629	495
Միջինը	91	80	221	190	581	495

Հետևաբար բոլոր տեքստերի համեմատությունից ստացված միջին տվյալների արդյունքներից պարզվում է, որ հայերեն խոսքի արագությունը ռուսերենի համեմատությամբ ավելի դանդաղ է, թեև հաղորդավարների խոսքում այն հասնում և նույնիսկ գերազանցում է ռուս հաղորդավարների խոսքի արագությանը:

Այսպիսով, մենք ցույց տվեցինք հայերենի խոսքի տեմպի քանակային կողմը, կանգ չառնելով տեմպի հետևանքով լեզվում կատարվող իմաստային և հուզական դրսևորումների վրա, որոնք արդյունք են խոսքի արագության փոփոխության: Խոսքի տեմպը հնչերանգի մյուս բաղադրիչների՝ մեղեդու, շեշտի, ռիթմի, տեմբրի հետ միասին մեծ նշանակություն ունի խոսքի ձևավորման համար:

ТЕМП РЕЧИ

А. А. ХАЧАТРЯН, Р. М. ТОХМАХЯН, А. А. ЗАКАРЯН

Резюме

Одной из особенностей речи каждого конкретного языка является ее темп, без которого нельзя представить себе интонацию.

Темпоральные характеристики армянской речи еще никем не изучались. Это отчасти объясняется тем, что само понятие темпа относительное, и его нельзя изучать без сравнения с каким-либо языком.

Материалом для изучения и сравнения послужили однозначные тексты на армянском и русском языках, записанные на магнитофонной ленте с различных телевизионных программ.

Условно выделены три типа текста, которые по предварительным наблюдениям характеризуются своими темпоральными признаками: I — дикторская речь, II — заранее подготовленная недикторская речь, III — неподготовленная речь. И действительно, речь диктора, зачитывающего текст, является наиболее быстрой по сравнению с недикторской речью. Наименьшей быстротой отличается неподготовленная речь. Это относится как к армянскому, так и к русскому языку.

Внутри каждого типа речи проведены сопоставления по языкам. Сопоставительные данные приведены в сводной таблице, из которой явствует, что если в первом типе речи между армянским и русским языками почти не существует различий в темпе, то во втором и третьем типах армянская речь характеризуется более медленным темпом. Если сопоставить эти данные по параметрам за единицу времени, то из этих данных отчетливо видно, что за одну секунду в армянском языке произносится меньше слогов, меньше звуков слов. Так, средняя длительность слов в армянском почти на 100 мм в сек. больше средней длительности русских слов, что говорит как о медленном темпе армянской речи, так и сравнительно большей длине армянских слов.